

ՄԱՍԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացը կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անհրաժեշտ հակողութիւն.—ՆԵՐՔԵՆԱԲԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Բազուի նաւթարդիւնաբերողների XIII ժողովը. Նամակ Մօսկվայից. Նամակ Ղազարի գաւառից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիբեթայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆ

Մեր ժամանակը, որ յայտնի է իր բազմաթիւ գիւտերով և հնարքներով, առաջ է բերել մի բացասական երևոյթ, որի դէմ անհրաժեշտ է մշակել մարտնչուն հակա միջոցներ: Մենք աչքի առաջ ունենք զանազան ուսուցիչների, ըմպելիքների և ուրիշ մթերքների խարդախելը և կեղծելը: Շատ քիչ առարկայ կարելի է դնել, որ մարդ կարողանայ ձեռք բերել հարազատ և անարատ վիճակի մէջ: Ամենօրեայ պիտոյի այնպիսի առարկաներ, ինչպէս են ալիւրը, կաթը, իւղը, գինին, քացախը, սուրճը, թէյը, մեղրը և շատ ուրիշ նիւթեր պարունակում են իրանց մէջ զանազան լատենուրդներ, որոնց մէջ պատահում են նոյն իսկ շատ վտանգաւոր և թունաւոր տարրեր: Իրանց սպառողը միջոցաւոր ազդեցութիւններ են, որ սակայն մինչև այժմ միջոցներ չէ մշակել իւրան ազատ պահելու կեղծումներից և թէ՛ն զանազա, բայց անհրաժեշտ թունաւորումներ:

Մի քանի անգամ յարուցվել է խարդախութեան մասին հարցը, բայց զործնական հետեւները չէ արդիւնաբերել, բացի մասնաւոր մի քանի կարգադրութիւններից և որոշումներից: Այժմ նորից նոյն հարցը հրապարակ է հանել «Вѣстникъ Винодѣлн» ամսագիրը, որ վճարով առանձին լրջութիւն և նշանակութիւն տալ գործին, դիմել է նշանաւոր քիմիկոսներին, հիգիենիստներին, իրաւաբաններին և ուրիշ գիտնականներին, խնդրելով յայտնել իրանց կարծիքները և խորհրդածութիւնները յարուցած խնդրի մասին: Մասնագէտները հաճութեամբ ընդունել են առաջարկը և ուղարկել են ամսագրի խմբագրութեան իրանց պատասխանները, որոնք արդէն սկսել են հրատարակել: Ինչպէս կարելի էր առաջուց սպասել, մասնագէտները շեշտում են հարցի կարեւորութիւնը և լայն տեսած կարծիքների մէջ, որոնք պատկանում են Վ. Մարկովիչիով և Ն. Բուլգէի պրօֆեսորներին, մասնաւորապէս են անում խնդրի մշակելու և լուծելու ձևերը: Այդտեղ անհրաժեշտ է կառավարութեան և հասարակական հաստատութիւնների միջամտութիւնը և հակողութիւնը: Պէտք է հրատարակվեն յատուկ օրէնքներ, ինչպէս նաեւ արդէն գոյութիւն ունեն արտասահմանում, օրինակ Կերմանայում, պէտք է հիմնվեն յատուկ լաբորատորիաներ կենսական մթերքների մշակման հետազոտութեան համար, պէտք է կազմակերպվի հակողների մի հաստատութիւն, որ սխտեմատիկ կարգով հակի մթերքների վրա և պատասխանատուութեան ենթարկել բոլոր այն անձանց, որոնք մասնակցել են խարդախելու գործի մէջ. պէտք է վերջապէս հրապարակ հանել խարդախողների անունները, որպէս զի հասարակութիւնը զգուշանայ նրանցից ապրանք գնելու:

Թէ որ աստիճանի է հասնում արհեստական կերպով մթերքների փոփոխութիւնը, կարելի է եզրակացնել հետեւեալ փաստից: Մօսկվան ստանում է տարեկան 450,000 պուլէ գինի և արտահանում է 790,000 պուլէ, ուրեմն նա ինքը շինում է և արդիւնաբերում 340,000 պուլէ:

գինի: Սակայն որոշեցին: Մօսկվան չունի ոչ խաղողի այգիներ և ոչ սեփական գինի. բայց ունի առատ ջուր, սպիրտ, շաքար և զանազան ներկեր ու հիւթեր, որոնք և օգնում են նրան գինիներ շինելու: Մեր բերած թուրքին պէտք է աւելացնել և այն գինին, որ սպառվում է Մօսկվայում և մենք կը ստանանք խարդախութեան մի սարսափելի տեսարան: Նոյնը մեծ է փոքր չափով կրկնվում է ուրիշ տեղերում:

Մթերքների խարդախելը բացի այն հանգամանքից, որ անմիջապէս վնասում է առողջութեան, ունի և այն աննպաստ ազդեցութիւնը, որ շնչում է օգտաւէտ արդիւնաբերութեան զարգացումը: Արդարեւ, եթէ Մօսկվայի գինեւաձառները անկարող լինէին արհեստական գինիներ շինել և ստիպված լինէին գնել բնական և անարատ գինի, այն ժամանակ այդ մթերքը պէտք է պահանջէին այն տեղերից, ուր բուսնում է խաղող և պատրաստվում է գինի, իսկ այդ պահանջը կօգնէր գինեգործութեան զարգացման և այդգործութեան բարգաւաճման:

Ժամանակ է, որ խարդախելու դէմ կուրը ձանաչվի պետական և հասարակական էական պարտաւորութիւններից մէկը և վերջ դրվի մի գրութեան, որ վրնասում է թէ ազդեցութեան առողջութեան և թէ գիւղատնտեսութեան զարգացման:

ՆԵՐՔԵՆԱԲԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Թիբեթայեցի կարծես երկվել են ապացուցանել, որ XIX դարի վերջին տարուց դրանք մի հակադաս թուիչ են գործել ղէպի յետ և խրվել են միջնադարեան կրօնական տիպերի մէջ: Հոգիների անմահն որսորդ զօմիսիկեան եղբոր պատերները, նրանցից պատառներ խողոյ ոչ պակաս անմահն բողոքական, աւետարանական, մեթոդիստ, մկրտչական, երկնական և այլն առաքելները, բոլոր, անչաթ և աղէտ հայ կղերը համախմբվել են օսմանեան դժբաղդ երկրում այնպիսի տեսարանների մէջ, որոնք միայն վրդովեցնել, միայն անհաւատութիւն պատճառել կարող են: Եւ տխուր պատկերը աւելի ևս յուսահատական է դառնում, երբ տեսնում էք, որ կրօնական ֆանատիկոսութեան մատնված ժողովուրդը չունի ղեկավար, անկեղծ խորհրդատու, որ կարողանար այդ բաց անել: Նայեցէք Վ. Պոլսի հայ մամուլին: Զատիկի շաբաթին հրատարակված լրագրիչների համարներում դուք տեսնում էք՝ «Աւագ ուրբաթի յուշեր», «Նուագ յարութեան», «Ունելուայի առթիւ» և այլ այսպիսի վերնագրեր: Կամենում էք իմանալ, թէ ինչ կայ այդ յօդուածներում: Ահա մի նմուշ՝ Մուրհանդաի լրագրի մի առաջնորդող յօդուածից.

Ուրբաթ գիշերուան օրհնութեան շաբաթական Ս. Մահալ Գուլայի արծաթաթղթի վրա կողբայ, և անոր յարակից երգով սոսկումը կը յայտնէ.—«Ո՛վ ոքանչեղ և տեսիլ հասարակ. զԱրարչին երկնի և երկրի այսօր տեսաք ի խաչին: Ս. Մահալայ ձայնակից է Շուրհային Աւագ Ուրբաթի յատուկ երգերով: Կարելի չէ անթաց աչքով մտիկ ընել այդ հոգեհառաչ երգերը, որոնք հայ գրականութեան ու բանաստեղծութեան լատենուրդին գոհարներն են: Այդ երգերը միանգամայն աւետարանական պատմութեանց մեկնութիւն կրնան համարվիլ, ինչպէս է Շուրհային Այսօր Անձառա երգը:

Բայց կայ աւելի հրաշալի: Զատիկի շաբաթ օրը նոյն Մուրհանդաիկ մատուցեց իր ընթերցողներին մի երևելի ժողովուրդ, որի միջից հանում ենք հետեւեալ կտորը.

Աստուծոյ որդին խնդրեց Հայր Աստուծոյն որ թող տայ իրեն՝ երկնից ու երկրաց ուկիանսներուն վրա նաւարկել նաւարկել, իր թախիծ փարատելու համար. թախիծը, զոր գերազգաց իր սրտին կը բերէին գեղապանած այդ աշխոյժ ժողովրդեան բարոյական ան-

կունի և իր հրապուրիչ առաջնորդութեամբ մարդկութեան մոլորումն ապականութեան ճամբուն մէջ: Նրբ աստուածային գահայից մօտ եկաւ նորէն՝ ուկիանսներուն վրա իր երկար ճանապարհորդութենէն, տեսաւ որ Հայր Աստուծոյ կուլար ու Հոգին Սուրբ Աստուծոյ աղանձի պատեանէն ելած՝ բուր մը մարմնոյ մէջ մտած էր: Նրբաւոր աշխարհներուն կորուստը՝ մօտալուտ, անխուսափելի էր այլ ևս: Քերթվաթէ՛ք՝ զկիկոր՝ թեքներն ծալած էին, ու բուրվառններուն մէջ անեղ անչէջ հուր կը ծառայէր տրամադէն:

Սա առաջնորդող յօդուած է, որի տակ գտնում ենք Վ. Պոլսի հայ թերթերի մէջ բնականորէն անգամ գովված ու փառաբանված մի աւանդ.—Նորիս Տեմիրիզիպաշեան... Ի՞նչ սովորի այսպիսի առաջնորդողներից գովմանեան և եղբորական ցանցերի մէջ ընկած վանեցին. Ի՞նչ սովորի այն թշուառականը, որի վտիտ, չարատանջ մարմինը վրա քրդերն են կուռում, իսկ հոգու վրա—առաքելական և սրբազանագոյն դերապաշտները, պատուելիները, հայրերը, միստրները և այլն: Մութը չափազանց անդուլ կերպով է չորհապատել Թիբեթային: Եւ խաւարի ուկիանսներում մի հատիկ յուսատու ճառագայթ չէ երևում...

Որքան զղուելի է տեսնել վաճառքի հանած մարդկային անամօթութիւնը, այնքան միթաբական է այն հանգամանքը, որ անամօթութիւնից երես են դարձնում ամենքը: Մագաղ Նէյ-մանի լիբր գրքի մասին խօսելով, «Ճարագ» շաբաթթերթը գրում է.

Մենք խորհուրդ ենք տալիս անպատճառ կարողալ այդ գրքի չորհուրդ մասը, ճանաչելու համար թէ որ աստուծոյ գոհութեան կաբող է հասնել այն մարդը, որի համար ոչ մի սրբութիւն, ոչ մի պատիւ հարց, ինքնասիրութիւն կամ նոյն իսկ ճշմարտախօսութիւն ասած բանը գոյութիւն չունի:

Իսկ մենք ասում ենք: Ամենալաւ պատիժը, որ կը ստանայ Նիկողոսով իր անամօթութեան համար, այն կը լինի, որ դուք դէն կը չարտէք այդ գրքը ոչ միայն այն պատճառով, որ ամեն կեղտոտութիւն առհասարակ զղուանք է յարուցանում, այլ մասնաւոր այն պատճառով, որ փողով ցելա առնելը ցելա տուողին աւելի լրբացնել է նշանակում:

ԲԱԳՈՒԻ ՆԱԹԱՐԳԻՒԹԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ XIII ԺՈՂՈՎԸ

Նաւթարդիւնաբերողների ժողովի նիստը տեղի ունեցաւ հասարակաց ժողովարանի դահլիճում ամսին 4-ին: Նիստը բացված լինելուն պէս՝ յայտարարվեց հերթական XIII ժողովի խորհրդածութեան առաքելների ծրագիրը՝ համաձայն լեռնային դեպարտամենտի ղեկնիտորից ստացած հեռագրի: Ապա տեղի ունեցաւ նաւթահանքերի տեխնիկական մասի վրա հսկող յանձնաժողովի ղեկնիցարի ընթերցումը:

Այդ ընթերցումը, որ ժողովականներից մասեր խնդ, անցաւ շատ աննպատակ ձևով: Կարծես դատաւարութեան մի ձևականութիւն էր, որ արեւմտայից տեղի ունեցաւ: Ժողովի ջարտողար կարգում է շատ անհնարելի կերպով, ինչն չէ լսվում, ոչինչ չէ հասկացվում. ժողովականները ներս ու դուրս են անում անխոյժ կերպով, բայց այնուամենայնիւ ընթերցումը շարունակվում է և ուկնդիրներից ոչ ոք չէ խնդում գտնել, որ ընթերցումը կատարվի բարձր ձայնով, որ լսելի, հասկանալի լինի: Եւ այդպէս էլ անցաւ, վերջացաւ առանց նկատողութիւնների և առանց որոշումների: Այն ինչ այդ յանձնաժողովին վերապահած ֆունկցիան կաբերու նշանակութիւն ունի և պէտք է դրական տեղ բռնէ՝ նաւթարդիւնաբերութեան ընդհանուր գործի մէջ:

Նախագահը՝ նկատելով ժողովականների անհանդուրժելի կարծէք հարկադրված, սկսեց ժողովին յայտնել իր դիտողութիւնները՝ ղեկնիցարի մէջ յիշատակված հարցերից մէկը՝ բանաւորների համար խնայողական արդի հիմնելու մասին: Նաւթահանքերում այժմ բացի պոս-

տատան կից խնայողական դրամարկից ուրիշ դրամարկ չը կայ. իսկ այդ դրամարկից բանաւոր դասակարգը համարեա թէ չէ օգտվում: Նախ՝ որ շատ հեռու է, երկրորդ՝ ձեռնկան անթիւ անյարմարութիւններ են հանդէս գալիս գործողութիւնների ժամանակ: Այդպիսով բանաւոր դասակարգի մեծագոյն մասը ստիպված է լինում ամսվայ ընթացքում ստացած ուսմիկը պահել իր մօտ, որ մեծ անյարմարութիւն ունի: Մինչև այժմ բանաւորների ամսավարձը տրվում էր միանգամից՝ ամիսը վերջանալուց յետոյ. իսկ այժմ, անցեալ տարվանից սկսած՝ լեռնային վարչութեան կարգադրութեան համաձայն՝ տրվում է երկու անգամում, մէկը ամսի 15-ին, մէկն էլ ամսի վերջին: Այդ արված է, ի հարկէ, յօգուտ բանաւորների, բայց վերջիններս փոխանակ օգտի, աւելի վնաս են ստանում դրանից, և այդ պատճառով էլ միշտ դժգոհութիւն են արտայայտում, երբ ամսի 15-ին ուսմիկ են բաժանում: Նրանք աւելի լաւ են համարում ամսական մի անգամ ստանալը, որովհետեւ այդ յարմար է: Միանգամից ստանալով՝ բերում են քաղաք կամ դիւղ խնայողական արկղներում՝ կամ յանձնում այս կամ այն բարեկամին, ծանօթին. այդ մի և նոյնը ամսվայ ընթացքում երկու անգամ անելու հնարաւորութիւն չունեն, հենց այդ պատճառով ամսի 15-ին ստացած կէս ուսմիկը ստիպված են լինում պահել իրանց մօտ—մինչև ամսի վերջը, մէկ և միւս կէս ուսմիկի ստանալը. իսկ այդ պահել կապված է անխուսափելի վտանգի հետ: Բանաւորները ստանալով կէս ուսմիկը թէ՛ն ամեն կերպ աշխատում են պիտի տեղում պահել՝ բարձի մէջ խրել, հագուստեղէնի վրա կարել և այլն, բայց այնուամենայնիւ վտանգի առաջն անկաբող են լինում ամեն: Նախագահութեան էլ գործ դնելու լինեն՝ անկարելի է, որովհետեւ տանեալու տեսակ-տեսակ մարդիկ բնակվում են մէկ ընդհանուր կացարանում, որտեղից երբ մի մասը աշխատելու է դիւղում, միւս մասը հանգստանալից վերադառնում է նոյն կացարանում՝ հանգստանալու համար. այնպէս որ ցանկացողի համար միշտ կայ յարմարութիւն թէ կողքի ընտօն հագուստեղէնը կուպրտելու և թէ քացակայի ունեցածը տանի ու վրա անելու: Եւ անում են: Գողութիւններ են, որ կատարվում են շատ յաճախ, համարեա բոլոր նաւթահանքերում:

Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով՝ ղեկնիցարի կազմող յանձնաժողովը նաւթարդիւնաբերողների ուշադրութիւնը հրաւիրում է բանաւորական դրամարկի այն նոր ձևի վրա, որ մշակել է ֆինանսների մինիստրութիւնը: Այդ ձևի առաւելութիւնը կայանում է նրանում, որ անհամեմատ հեշտացնում է փող ուսմիկը և փող յետ ստանալու եղանակը, որ ներկայումս կապված է մի շարք ձևականութիւնների հետ: Ամեն մէկ ֆիրմա կարող է իր նաւթահանքում հիմնել դրամարկի իր բոլոր ծառայողների համար, նշանակելով իր կողմից մէկին դրամարկի գործավար-կառավարի: Ֆիրմայի նշանակած այդ լիազօրը հանդիսանում է միջնորդ մարմին: Ֆիրմայի բանաւորների և բանակի խնայողական արկղի մէջ: Թէ՛ն ամէն մէկ ծառայողի, բանաւորի համար բացվում է առանձին-առանձին հաշիւ և տրվում է իւրաքանչիւրին գրքից, բայց դրանց հաշիւն բանկի հետ գործ ունենում է ֆիրմայի կողմից նշանակված լիազօրը. նա է փող գցում բանկ, նա է բանկից ստանում: Այդպիսով ամենայն դեպքում տրված է լինում բանաւորներին իրանց տնտեսած ապահով կերպով խնայելու: Այդ նոր ձևին ժողովը տուեց իր հաւանութիւնը: Նիստի վերջում տեղի ունեցան ընտրութիւններ: Տեխնիկական մասի վրա հսկող յանձնաժողովի անդամներ ընտրվեցին գաղտնի բուլետներով, Կ. Բարդախի, Ա. Գալաղուշի, Տէր-Մարկուսեան, Մանչո, Տէր-Գրիգորեան, Էկուրեղ, Գուրնիկ և իշխ. Գաղաթի:

Ն. Գալաթի

ՆԱԽԱԿ ԲՈՒԹԻՆ

Մայիսի 2-ին

Այսօր, պատարագից յետոյ, տեղիս Սուրբ Խաչ եկեղեցում տեղի ունեցաւ պ. երէցփոխ Մատի- նեանի հրաւերով ծխականների արտակարգ ժո- դով, որը պէտք է զբաղվէր բանաստեղծական խնդրով: Քանի որ խնդիրն էր պէս-պէս վարժարաններով, ինչպէս յայտնի է, ընդհանուր հայկական ցաւ է, որից ապառ չէ մէ մի հա- յարանակ վարչ: Մասկովայի հայ գաղութին էլ վա- ղուց է, որ տառապում է այդ ցաւով: Մեր աւագ բանաստեղծ, որ ֆիզիքական անդորով ին- նից (մտաւորն ու բարոյականը մի կողմն են թող- նում) էլ ոտքի վրա չէ կարողանում կանգնել, երկար ժամանակ իր արդիւնաւատ պաշտօնից բաժան- վել չէր ուզում: Նա ամեն ներքին ու աններքին միջոցներ գործ էր դնում, որպէս զի ժողովրդի իրաւունքները ոտքի տակ տայ և դուռով քահա- նայ մնայ: Սակայն չնորհի մեր նոր երէցփոխ Մատիւնեանի և եկեղեցական խորհրդի, որոնք ժողովրդի հաւատարմութիւններ են հանդիսանում և որոնք մեծ եռանդ ցոյց տուին այս գործում, այսօր ուժասպառ բանաստեղծ արդէն հրաժարվաւ է իր պաշտօնից և հոգեւոր իշխանութիւնն էլ հաս- տատաւ է այդ հրաժարեցումը: Այն, ինչ որ ամ- բողջ տասը տարի խռովութիւնների ու գծաւոր- թիւնների առիթ էր տալիս այստեղի հայ հա- սարակութեան, այսօր, վերջապէս, ողորմու- թեամբն Աստուծոյ, կարելի է վերացրած հա- մարել:

Անցաւ հին դարը, բայց հիմա առաջ են դա- լիս նոր դարերը: Մասկովայի հարկաւոր է մի լուսամտ, բարձր կրթութիւն ստացած, իր կոչման բարձրութիւնը ճանաչող, բարոյգիտ, ընդունակ և ուսուսղէտ հովիւ: Մի խօսքով մի նոր Սուրենեան: Ինչ տեղից դառնել այդպիսի մէկին մեր ամապայծառ հողերակալութեան մէջ, որ բարձր կրթութիւնով բանաստեղծ դրացիով պէտք է սրտենա: Այդ մէկ դարը, որը չուտա- փոյթ դարձանք այնքան էլ հեշտ չէ: Երկրորդ դարըն էլ այն է, որ նոր բանաստեղծ հրաւիրելու վերաբերման դեռ գործի սկզբում արդէն կուտակեցական կրքերի հոտ է փչում... Ինչպէս նշանները երևում է, դարձեալ պատրաստուած են հրապարակ գալ իրանց տա ր ա ս կ օ ն ա- կան տ ա ր ա ր է ն ու թ ե ա մ ք հասարակու- թեան քաջ յայտնի մի քանի փողոցներ հերոսներ, որոնք մի բանով աչել ընկնելու համար հոգի են տալիս...

Գեռ ժողովը չը սկսած, այդ Տարաբախտներից մէկն արդէն եկեղեցական բաղում իր արբանակ- ների ու համախոհների մէջ սկսել էր նախա- պատրաստական քննիչը: Իսկ զիտեք այդ քննիչը- ների զլուտուր պատճառն ինչ է, որ նոր հրա- լիրելը բանաստեղծ «ազատամտները» չը լինի, այսինքն՝ ծաղկական... Օ՛, անսահ կուրթութիւն...

Ժողովին բերանացի կերպով նախագահ ընտր- վեց պ. Գր. Խաչկանյան: Տեղի ունեցան բաւա- կան անտեղի վիճարկումները զլուտուր պատ- ճառն արդէն բանաստեղծ պաշտպանների կողմից: Այդպիսի պաշտպաններ էլ կան: Իսկ մի երկուսն այդ պաշտպաններից (տարաբախտաբար, բռնիչ և ուսուցիչ) իրանց տրամաբանութեամբ այն տեղը հասան, որ համարեա պնդում էին թէ բանաստեղծ չէ ծերանում... թէ հալից ընկած բանաստեղծի հանգստութիւն տալը մի «սիրտ յուզող ողբերգութիւն է» և այլն: Այդ պարոն- ների «ողբերգական» ճառերը կէս-լուրջ, կէս- հեգեման եղանակով լեզուներ, ի հարկէ, պ. պ. Ստ. Մամիկոնեան և Լեւոն Սարգսեան: Այնու- հետև ժողովը վճռեց ընտրել մի մասնաժողով, որ զբաղվի նոր բանաստեղծ հրաւիրելու լուրջ խնդրով: Մասնաժողովը պէտք է բանակցութիւն- ներ սկսի զանազան ձեռնաս անձանց ու հիմնարկութիւնների հետ, տեղեկութիւններ ժո- դովի հրաւիրվելը բանաստեղծ մասին և ապա իր եզրակացութեամբ հանդերձ ղեկուցումն ներկա- յացնի ծխականների ընդհանուր ժողովին, որը մի քանի ամսից յետոյ նորից կը հաւաքվի այդ առիթով և վերջնական վճիռ կը կայացնէ: Մաս- նաժողովը պէտք է զբաղվի նաև հեռացող բանաստեղծի ապահովութեան, կենսաթոշակ նշա- նակելու խնդրով: Մասնաժողովի անդամներ ընտրվեցին, բայց երէցփոխից ու եկեղեցական խորհրդից, որոնք իրեն պաշտօնական մարմիններ արդէն ժողովում են այդ մասնաժողովի կազմը, նաև հինգ հոգի ծխականներից: Թէև եկեղեցու բաղում տեղի ունեցած նախապատրաստական քննիչն անհետևանք չանցաւ—խառնակիչ էլ է- լինում էր ներս պրծնող եղաւ մասնաժողովը, բայց այդ ոչինչ: Հայերիս հասարակական կենսոյն այնպէս է, որ «առանց մարդկանց գլխի հարսա- նիք չի լինում...»: Սակայն ընտրվածներից Շահազիզի, Մատիւնեանի, Մամիկոնեանի, Խաչա-

թեանի անունները յուսալի գրաւականներ են, որ նրանք բանաստեղծական լուրջ խնդրում և՛ հեռա- տես, և խորհայեաց կը լինեն:

ՆԱԽԱԿ ԳԱՅԱՆԻ ԳԱՆՈՒԹԻՆ

Փարվանսարա գիւղ, մայիսի 4-ին
Երէկ մի չը տեսնված անձրեւ եկաւ. կառա- ղեալ հեղեղ էր: Գետերը 10 րոպէի մէջ վարա- րեցին, առուակներ գոյացան և թափվելով ա- ռաջին պատահած տները մէջ, կտորներով պատերով, դուռն հանեցին գիւղացու տան մէջ գտնված ունեցած-չունեցածը: Այգիները փչա- ցան. ձորամիջի և գետիվայր տեղերի արտերը մեծ մասամբ անպէտքեացան հեղեղի տակ: Բան- ջարանցիները սաստիկ վաւայեցան: Տուն չը մնաց, որ չը կաթէր. ա՛ն ու երկիւղ ամենքին պատեց. «աշխարհիս վերջն է», ամենքն էին ա- ղաղակում: Անձրեւն սկսվեց ժամի 12-ից, այն- պիսի սաստիկ որոտումից, գոռում գոռումից յե- տոյ, որ գիւղացիք այդ բանը վերագրում են մի տարօրինակ հետեանքի. երկու անգամ յորդ անձրեւ եկաւ կարկուտաւան, երկու ժամ ընդմիջ- ջանով: Աղբյւրի գետը Արզնիանի նկարագրած Ջանդին էր ներկայացնում. այս անգամ ոչ թէ «քաղցր բերանին, արքայանքով...», այլ տները մէջ իր կուլ տուած ալիւրի ջուլներով, կա՛ն-կա- րախնով, չու՛թ ու խոփով, խնոցի կոտով, պը- ղինձ ու ամանով, ւնեւորան զոչակով:

Մարդկային գոնիւր չեղան: Բայց այսօր դուռն է մնացել վերին-աղբյւրների Թորոս Փորձաշանի իր բաղնիքով ընտանիքով. հեղեղը քչել տարել է տան միջի ամեն ինչը. գու՛ր շարժող խօսքերն էլ այստեղ աւելորդ են... Երբ, քաղցած և ան- տուն մնալը ամեն նկարագրութիւնից բարձրա- գոյ աղաղակ է: Օգնութիւնն անհրաժեշտ է: Սրա հարկան Շահինեան Յարութիւնին և իր որդուն տան կտուրով հաղիւ են կարողացել հանել թո- կով և ազատել խեղդվելուց, թէև այսօր նրա համար աւելի լաւ է ջրում խեղդվելը քան տու- նը ջրով լցված տեանը, դո՛ւն ու մարագը բար- ուբանդ եղած: Շատ հին և խաբիւր գոմեր և մարագներ քանդվել են: Այգիները չափարները հեղեղը քչել տարել է:

Որքան էլ գիւղացին աղբաւ է, սակայն գիւ- ղական տանտէտի արձանագրութիւնից երե- տում է, որ վերին-Աղբյւրի ջրին զո՛հ գնացած այդ մի քանի տան վնասը հասնում է 1510 րուբլու: Օգնել ցանկացող թող ուղարկէ «Մշա- կի» խմբագրութեանը, մենք կը ստանանք և կը բաժանենք: Երկրից բարկացել, անձրեւ էլ չէ դա- նում, իսկ այժմ բարկացել անձրեւ էլ չէ դա- դարեցնում... Երթեկութիւնն ընդհատված է ճանապարհների փչանալու պատճառով: Ծանա- պարհի վրա բանում են բաղնիքի մշակներ: Այս անձրեւը ոմանց գործեց, ոմանց կանգնեց- րեց: Երկու գիւղի վնասը կը հասնի մի քանի հազարի: Մի քանի անասուններ էլ քչեց գետը, բայց աղովից դուռն հանել ջրից: Զրաղացիներն էլ չեն բանում, որովհետև արևները քանդել են հեղեղը: Սարերում ձիւնը և կարկուտը նստել է: Պրիստուն անձամբ չըջում է և արձանագրում: Անձրեւ չէ դադարում:

ՆԱԽԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, ապրիլի 29-ին
«Մշակ» № 30-ի մէջ Պօլսից ստացված մի լուր էր տղված թէ ամեն. Իզմիրեան սրբա- ղան Անդրիոյ թագուհուն պատմական տա- ներ է ց է նշանակված:

Իսկայէս այդ լուրը ժամանակին Կ. Պօլսից ինձ և հաղորդվեցաւ անտրոյս՝ Պօլսից մի կողմից, բայց հետեալ պատուի հերքեց այդ լուրը և յայտնեց թէ ստուգութիւն չը գտաւ այն: Նոյն բանն հաղորդվում է այժմ ինձ բուն աղբյւրից և ես պարտք եմ համարում այս երկ- տողովս յայտնել Պօլսից հաղորդված այդ լու- բին ստուգութիւն չը գտնելը:

Իօսիւ. Կ. Փաշայեանց

ՆԱԽԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոր-Նախիջևան, մայիսի 4-ին

Առ 16 փետրվարի 1899 յօդուտ մեր անմահ բանաստեղծ Ռաֆայէլ Պատկանյանի մահարձա- նի համար ժողոված մեր ժողը 1602 ր. 25 կ.: Ստացաւ Մ. Մ. Պօլսից 25 ր., Մ. Զ. Զաքարեանից 15 ր., Եղբարց Խուրաւիկերեանի- նից 15 ր., Բիստան-Ազաւանից 10 ր., Ն. Կ. Զեյնեանից 5 ր., Բ. Մ. Պօլսից 5 ր., Եղբարց Ամիրեանից 5 ր., և Բաթումից՝ Ա. Կ. Մընտեանից 10 ր., ընդամենը՝ 90 րուբլ: Ուրեմն ողջ գումարը մեր ժող առ 4 մայիս կը լինի 1692 ր. 25 կոպէկ:

Սպասում ենք միշտ, որ Բագրուտն և Թիֆլիսը Նոր-Նախիջևանից, Բուսովից և Բաթումից յետ չեն մնայ և կուղարկեն մեզ իրենց լուսան Նախիջևանի Դոնու, Գրիգորի Մալախիանու.

Գր. Զախուշեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԹԻՆ

Ապրիլի 3-ին Օղէսայում վախճանվեց բարօնէ- սա եղիսաբէթ Ֆօն-Դեր-Բրիգգէն, Գրիգոր և Անդ- րէաս Արծրունիների միակ ընդեր: Հանգուցեալի ցանկութեամբ նրա մարմինը հողին յանձնեցին Մօսկվա, հայոց հանգստարանում, Արծրունիների մօր գերեզմանի մօտ: Ֆօն-Դեր-Բրիգգէն լիողեց մի որդի՝ Գեորգ անունով և երկու աղջիկ. որ- դուն կտակված է Թիֆլիսի Սիօնի փողոցում գտնված Արծրունիների պապից մնացած քա- ղավանսարան (Գեորգ աղի քարավանսարան):

Անդրիական յայտնի ժուրնալիստ և հրապա- րակախոս Ուլիամ Ստէլ ապրիլի 30-ին արժա- նացաւ ներկայանալ Ռուսաց Փագաւոր Կայսրին: Ստէլը, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, վերջին կէս տարվայ ընթացքում առանձնապէս զբաղված էր խաղաղութեան գաղափա- րի քարոզութեան գործով: Հիմնվելով այն նշա- նաւոր շրջաբերականի վրա, որ ուղարկեց Ռու- սաց արտաքին գործերի մինիստրը ընդհանուր ղեկավարի մասին, Ստէլը վերցրեց իր վրա մի տեսակ առաքելութիւն, կազմակերպելով մի շարք միտինգներ խաղաղութեան գաղափարը տարածելու դիտաւորութեամբ և հրատարակելով մի յատուկ թերթ՝ «Կուր կուր դէմ անուշով, նոյն գործի ծառայելու նպատակով: Ստէլը մտա- ղել էր նորագոյն խաղաղութեան մի բանակ կազ- մել խաղաղութեան անունով, բայց այդ ծրագրի- ըր ցանկացած լախ ընդունելութիւն չը գտաւ:

Մեզ հաղորդում են, որ նկարչական ցուցա- հանդէսը կը շարունակի դարձեալ մի շաբաթ, այն է մինչև կիրակի, մայիսի 16-ը:

Ստացանք «Բանասէր» անունով հանդէսը, որ նուրբված է հնաիստական, պատմական և լեզուաբանական հետազոտութիւններին: Հան- լեզուաբանական հետազոտութիւններին: Հան- դէսի ղեկավարն է Կ. Բաւմաշեան, որ յայտնի է բեռնագրութեան և լեզուագիտութեան վերա- բերեալ իր ընդունելիներով: Մեր ստացած ա- ուշին գրքեր մէջ պ. Բաւմաշեան գետեղել է մի յօդուած Դարէհի արշաւանքի մասին դէպի Հա- յաստան, հիմնված այն տեղեկութիւնների վրա, որ տալիս են պարսկական, չոչական և բարե- յօնեան բեռնագրութիւնները: Այդ տեղեկու- թիւնները վերաբերում են 520—516 տարիների չըլմանի Քրիստոսի ծննդից առաջ և չեն համա- պատասխանում այն աւանդութիւններին, որ ըն- դունված էր մինչև այժմ պատմագիրների երկախ- րութիւնների մէջ: Պարսկական պատմագրի մէջ հայոց երկիրը կոչված է Արամիւնա, չոչականի մէջ Հարմիւնա, իսկ բաբելոնեանի մէջ Ուրաւա- տու, որ նման է Ուրարտու անունին: Թողուածի մէջ նոյնութեամբ բերված են բեռնագրերը և նրանց հայերէն թարգմանութիւնը: Հանդէսի այդ գրքեր մէջ սկսված են Պարսկի մատենադա- րանի հայերէն ձեռագիրների ցուցակի տպա- գրութիւնը և Սուբխանի Կ. Պարսեանի սրբագրած թրքերէնացի: Միւս յօդուածներից հետաքրքրա- կան է պրօֆեսոր Խալիլաֆի հայոց մասին դե- րած յօդուածի թարգմանութիւնը: «Բանասէրը» տպագրվում է Պարսկում գրքի դրքով, վիճա- գրութեամբ և արժէ տարեկան 20 ֆրանկ: Տա- րեկան պէտք է հրատարակվի չորս գրքը, իւրա- քանչիւրը բաղկացած 100 երեսից: Հանդէսի լե- ղուն արևմտեան է, բայց պարզ և դիւրամատչելի:

Շաբաթ օր, մայիսի 8-ին, Թիֆլիսի ժողովա- րանում կայացաւ դաշնակահար Իօսիֆ Սլի- վինսկու չորրորդ և վերջին կօնցերտը: 2ը նայելով անձրեւային վառ եղանակին, ժողովա- րանի զանիւր լին էր հասարակութեամբ: Սլի- վինսկու այդ օրվայ նուագելը պատկեց նախկին կօնցերտները: Ամբողջ ծրագիրը հետաքրքրեց ունկնդիրներին: Ոչ միայն Շուսանը և Շօպենը, որոնք այնքան տաղանդաւոր արտայայտող են դուր իրանց ստեղծագործութիւնների համար, այլ և Մենդելսոն, Լիստ, Բուքչինսկի, Հենսելտ և Մօցարտ այդ օրը գրաւեցին հասարակութեան ուշադրութիւնը դաշնակահարի նուրբ և արտա- յայտիչ նուագով: Լիստի Rapsodie XII և Մին- դելսոնի Variations Sérielles առիթ տուին Սլի- վինսկուն ցոյց տալ նրա նուագելու հմտութեան նոր կողմերը: Մօցարտի Rondo A-mole և Լիստի Etude F-mole գործերի, սիրուն թաւշեայ կտորների էին: Բուքչինսկիի Valse op. 14 գեղեցիկ էր: Քաղցրահնչուն և նուրբ էին Հենսելտի La fontaine և Si oiseau jétais. Շօպենից շատ աշուղ էր Etude op. 25: Սլիվինսկուն բաղնիքի անգամ ծախսահարեցին, ընծայեցին կանաչ տերեւներից հիւսած մի պսակ և ստիպեցին կրկնել մի քանի պիէսներ: Ինչպէս առաջին կօնցերտներում, նոյնպէս և այս վեր-

ջին կօնցերտում ներկայ էր մեր քաղաքի երա- ժշտասէրների մեծ մասը: Լսում ենք, որ Սլի- վինսկի Թիֆլիսից պէտք է գնայ Բագու:

Մեզ հաղորդում են, որ վերջին ժամանակ- ներս Կովկասի հանքային ջրերը բարեփոխելու նպատակով կառավարութեան կողմից ձեռնարկ- ված են մի շարք միջոցներ: Օրինակ, որոշված է բաց լիդնել գանձարանից շարունակ 7 տարի՝ Պրատիգորսկի, Էսենտուկի և Ժէլէզնօվօդսկու ջրերի բարեկարգութեան համար տարեկան 350,000 րուբլի: Հանքային ջրերի վաճառումը և արտահանելը տրված է մի մասնաւոր ընկե- րութեան, որը պարտաւոր է իր հաշուով հիւրա- նոցներ ու ձեռնկրէներ շինել: Այդ ընկերու- թեան հիմնադիրներն են՝ գեներալ Արապով, կոմս Բլաշկին, իշխան Կուրակին, իշխան Կան- տակուզէն ու պ. Մարկվարտ: Բացի դրանից որոշված է Էսենտուկի և Ժէլէզնօվօդսկու հո- ղերը տալ կապալով 99 տարի ժամանակով, այն պայմանով, որ երկու տարվայ ընթացքում այնտեղ անպատճառ կառուցանվեն ամառա- նոցներ:

Նորբերս վախճանված երկրորդ կարգի վա- ճառական Ա. Ս. Գրիգորեան, Օսթրալում, Վալ- ձեմեյնկայ փողոցում գտնվող իր տունը կտա- կել է ցած իր կնոյ, իսկ վերջինիս մահից յե- տոյ Թիֆլիս քաղաքին այն պայմանով, որ նրա արդիւնքով քաղաքը որդեգրենք պահի Թիֆլիսի լուսաւորչական հայերից: Բացի դրանից հան- գուցեալը կտակել է 500 րուբլի Ներսիսեան դպրոցին, 500 րուբլի քաղաքային արհեստա- գիտական դպրոցին, 500 րուբլի Վերայի հայոց գերեզմանատան եկեղեցուն, 300 րուբլի Մայ- դանի ս. Գեորգ եկեղեցու ծխական դպրոցին, 300 րուբլի Զգրաչէնի եկեղեցու ծխական դպր- օցին և 500 րուբլի Վարչավայի կոչակարա- կան մի գործարանին՝ ծերացած և կարօտ բա- նուորներին բաժանելու համար:

Մցիկթի վրաց տաճարի վերանորոգութեան համար նուիրել են՝ Կ. Ն. Զուբալով 300 ր., Կ. Մ. Ալիխանով 50 ր. և Մ. Յ. Գուրխանեան 50 ր.:

Ա.ԽԱՎԱԿԱՎԱԿԻՆ մեզ գրում են. «Բարնան շուտ բացվելը և վարուցանքի շուտ սկսվելն ու աւարտելը շատ էր ուրախացրել մեր գրեթէ- ներին, բայց երաշտը սաստիկ դող էր ցցել նը- րանց սիրտը: Նի՞թ մի 10 օր էլ անձրեւ չէ դար, գիւղացու յոյսերը կը խորտակվէին, բայց, բա- րեբաղդաբար, մայիսի 2-ից անձրեւներ սկսվե- ցին, որ ընդհատուիներով շարունակվում են մինչև այսօր: Նի՞թ ապագայում երաշտը չը վնա- սէ, աշող հունձ կը լինի»:

ԻԿԻԲԻԹԻՆ մեզ գրում են. «Ապրիլի 30-ին, գի- շերը, ժամը 10-ից անց հարաւից հիւսիս մի աս- տղ անցնելով կօնուսաձև բողբոսակից, լուսաւ- արելով երկիրը. կօնուսի լայն կողմի դիւմէտրը կը լինէր մօտ 6 վերջի, ապա աստղը կայծեր արձակելով կորաւ աչքից, անցաւ 2—3 րօպէ, լսվեց մի ահալին գոռոց, որ տեսեց մօտ կէս րօպէ: Հաւանական է, որ մետէօր էր»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿ ԹԻԻԲԻԱՅԻՆ

Վան, ապրիլի 26-ին
Այս շաբթուն բռնկեցաւ նշանաւոր մարդա- սպան և աւաղակաւուտ Էմիր-Օնալաի անունով թիւրք մը, որ 7—8 տարիներէ ի վեր շատ մը հայեր սպանած, հայ կիներ ու աղջիկներ առե- ւանգած, փախտական կը շրջէր երկրի ամեն կողմեր, և պատիւ մըն էր դարձել քաղաքացի և գիւղացի հայ ժողովրդեան. դէպքին ալ անպատ- մելի անգթութիւններ գործեց, որոց թւումն ը- նելը շատ երկար կըլլայ: Ասկէ տարի մը առաջ Բաշկալէի կողմերը բռնվելով՝ Վան կը զրկվի քանի մը ոստիկաններով. ճանապարհին ոստի- կաններու ձիերէն վառ իշած ու ճաշած պահուն յիշեալ ոճրագործը յարկարծակի ասորի ոստի- կանի մը ձիուն վրա ցատկելով՝ կը փախչի ու կազաւորի: Ասորի ոստիկանը, հոս գալով, քանի մը ամիս բանտարկվեցաւ ու պաշտօնադուրկ ե- ղաւ: Էմիր-Օնալաի կաշապէն կաշապէս և զան փախց- րած ըլլալու ամբաստանութեամբ. յիշեալ ասո- րին, գաղտնի հետաժողով լինելով Էմիր-Օնալա- յիւն, կը յաջողի այս շաբթուն գտնել անոր տե- ղը, և ուղղակի դիմելով կուսակալին եղելութիւ- նը կը պատմէ և կը խնդրէ, որ հրաման տրվի իրեն յիշեալ մարդասպանը բռնելու:

Արդարապէս կուսակալը անմիջական կերպով 20-ի չափ ոստիկան վնւորներ կը յանձնէ ա-

Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбелиановская ул., № 27.